ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2017 թվականի N 274-Ա

ԱՐԱՅԻԿ ՎԱՐԴԿԵՍԻ ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Արայիկ Վարդկեսի Մուքայելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավարի պաշտոնում, 2017 թվականի դեկտեմբերի 20-ից:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2017 թվականի N 275-Ա

ՆՈՐԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային Օրենսգրքի 94-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Նորիկ Գուրգենի Գևորգյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Զովք գյուղի վարչական ղեկավարի պաշտոնում, 2017 թվականի դեկտեմբերի 20-ից:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2017 թվականի N 276-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Սուսաննա Սերյոժայի Թադևոսյանին նշանակել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի թափուր պաշտոնում և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր (ծածկագիր 1.2-1)՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2017 թվականի N 277-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Թադևոս Աղասիի Կուջոյանի ընտանիքի խնդրանքը, ***որոշում եմ.***

Թադևոս Աղասիի Կուջոյանի ընտանիքին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 1-ին փողոցի թիվ 4 հասցեից բաժանված S_1 = 218,4 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 1-ին փողոց, թիվ 4 և S_2 = 467,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 1-ին փողոց, թիվ 4/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2017 թվականի N 278-Ա

ԱՆԱՀԻՏ ԱՐԱՄԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի թիվ 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Անահիտ Արամի Մարգարյանին նշանակել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետի թափուր պաշտոնում և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր (ծածկագիր 2.1-1)՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2017 թվականի N 279-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մարտիրոս Արտաշի Հովսեփյանի (ծնված՝ 1972 թվականի հուլիսի 18-ին), Արգիշտի Արտաշի Հովսեփյանի (ծնված՝ 1969 թվականի հունվարի 7-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 2-րդ փողոցի թիվ 56 հասցեի հողակտորում (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական N 721820, տրված անշարժ գույքի կադաստրի կողմից 2001 թվականի մայիսի 18-ին և անհատ ձեռնարկատեր Ստանիսլավ Սաֆարյանի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 4-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ բացված մեկ դուռը, ինքնակամ բացված հինգ պատուհանները, ինչպես նաև բաժանելու նշված հասցեի հողակտորը երեք առանձին մասերի:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Ստանիսլավ Սաֆարյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Մարտիրոս և Արգիշտի Արտաշի Հովսեփյանները ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժի 2-րդ փողոցի թիվ 56 հասցեի հողամասում 2010 թվականին ինքնակամ կառուցել են բնակելի տուն և նախամուտք՝ 50,79 քառ. մետր, բաց պատշգամբ՝ 53,04 քառ.մետր, հավաբուն՝ 16,06 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսներով և ինքնակամ բացել են մեկ դուռ և հինգ պատուհան:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Մարտիրոս և Արգիշտի Արտաշի Հովսեփյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ փողոցի թիվ 56 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Մարտիրոս և Արգիշտի Արտաշի Հովսեփյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ փողոցի թիվ 56 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

2. Մարտիրոս և Արգիշտի Արտաշի Հովսեփյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 2-րդ փողոցի թիվ 56 հասցեից բաժանված S_1=561,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 2-րդ փողոց, թիվ 56, S_2=577,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 2-րդ փողոց, թիվ 56/1, S_3=189,8 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, 2-րդ փողոց, թիվ 56/2 :

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 310 612 (երեք հարյուր տաս հազար վեց հարյուր տասներկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» դեկտեմբերի 2017 թվականի N 280-Ա

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԳԵՍԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Գարեգին Վարդգեսի Բադալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում, 2017 թվականի դեկտեմբերի 20-ից:

2. Վարձատրությունը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից հաստատված պաշտոնային դրույքաչափի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 20
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2017 թվականի N 281-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Նունե Լազրի Գալստյանի (ծնված՝ 1970 թվականի փետրվարի 22-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 1-ին տեղամասի թիվ 117 այգեգործական հողակտորում (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականի մայիսի 29-ին տրված թիվ Հ-5837 տեղեկանքը, «Էկոլոգ» այգեգործական ընկերության կողմից 1988 թվականի ապրիլի 25-ի տրված այգեգործի թիվ 66572 վկայականը և «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 4-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ զբաղեցրած հողամասը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Նունե Լազրի Գալստյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 1-ին տեղամասի թիվ 117՝ 510,0 քառ.մ մակերեսով հողակտորում 1990 թվականին ինքնակամ կառուցել է շինություններ՝ 518,6 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով և նրա կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 722,55 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 510,0 քառ.մետր մակերեսի փոխարեն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Նունե Լազրի Գալստյանի կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասը համայնքի հաստատված գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, ինչպես նաև Նունե Լազրի Գալստյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 1-ին տեղամասի թիվ 117 հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ջրվեժի Այգեգործական զանգվածի 1-ին տեղամասի թիվ 117 հասցեի օրինական հողամասին կից 102,0 քառ.մ հողամասի չափով ճանաչել Նունե Լազրի Գալստյանի սեփականության իրավունքը:

2. Սույն որոշման 1-ին կետով նշված 102,0 քառ.մ հողամասից ավել օգտագործվող 110,55 քառ.մ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի կարգով օտարել Նունե Լազրի Գալստյանին՝ կադաստրային արժեքի 30%-ի չափով, որը կազմում է 150 039 (մեկ հարյուր հիսուն հազար երեսունինը) դրամ:

3. Նունե Լազրի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի Այգեգործական զանգվածի 1-ին տեղամասի թիվ 117 հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 22
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» դեկտեմբերի 2017 թվականի N 282-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Հայկ Ջազոյի Տոնոյանի (ծնված՝ 1953 թվականի սեպտեմբերի 13-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-1 այգետարածքի թիվ 8 տեղամասի թիվ 19 հողամասում (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 8-ին տրված թիվ Հ-16336 տեղեկանքը, «ԳՈՒՅՔԱՉԱՓ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 15-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ զբաղեցրած հողամասը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳՈՒՅՔԱՉԱՓ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Հայկ Ջազոյի Տոնոյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-1 այգետարածքի թիվ 8 տեղամասի թիվ 19՝ 504,0 քառ.մ մակերեսով հողակտորում 1989 թվականին ինքնակամ կառուցել է շինություններ՝ 345,6 քառ.մետր ընդհանուր արտաքին մակերեսով և նրա կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 525,64 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 504,0 քառ.մետր մակերեսի փոխարեն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Հայկ Ջազոյի Տոնոյանի կողմից փաստացի ավել օգտագործվող հողամասը համայնքի հաստատված գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, ինչպես նաև Հայկ Ջազոյի Տոնոյանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-1 այգետարածքի թիվ 8 տեղամասի թիվ 19 հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայկ Ջազոյի Տոնոյանի կողմից փաստացի ավել օգտագործվող 21,64 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:
2. Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Հայկ Ջազոյի Տոնոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-1 այգետարածքի թիվ 8 տեղամասի թիվ 19 հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբեր 22
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2017 թվականի N 283-Ա

ՋՐՎԵԺԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Ժաննա Ռուբիկի Դավթյանը (ծնված՝ 1965 թվականի մարտի 11-ին), սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 10-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը փոխելու բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորից բնակավայրի հասարակական կառուցապատման հողերի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21122017-07-0084, տրված 2017 թվականի դեկտեմբերի 21-ին, «ՄԵԳԱ ՎԵՅ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 12-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը, «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 15-ին տրված տեխնիկական եզրակացությունը) և հողամասում կառուցված բնակելի տան գործառական նշանակությունը հասարակական սահմանելու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի, 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Ժաննա Ռուբիկի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 10-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվող 1498,0 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրի հասարակական կառուցապատման:

2. Ժաննա Ռուբիկի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 10-րդ փողոցի թիվ 3 հասցեում գտնվող 852,2 քառ.մետր ընդհանուր մակերեսով շինությունների գործառական նշանակությունը, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների սահմանել որպես հասարակական նշանակության շինություններ:

3. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանին՝ սույն որոշման առաջին կետում նշված հողի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4. Պարտավորեցնել Ժաննա Ռուբիկի Դավթյանին՝ որոշումից բխող իրավունքները գրանցել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանումում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2017 թվականի N 284-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կնյազ Վանյայի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 6-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 11/1 հասցեի տնամերձ հողակտորում տալ բնակելի տան ընդլայնման շինարարության թույլտվություն:

2. Պարտավորեցնել Կնյազ Վանյայի Ադամյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2017 թվականի N 285-Ա

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետով, ***որոշում եմ.***

1.Համայնքի կարիքների համար 2018 թվականին էքսկավատորով ձյան մաքրման, աղբակույտերի հավաքման և բարձման ծառայությունների, թրթուրավոր տրակտորով աղբավայրի և շրջակա տարածքի աղբի մաքրման, հարթեցման և ծածկման ծառայությունների ձեռքբերման, բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման, շարժիչի, հիդրավլիկ, փոխանցման տուփի յուղերի և քսայուղերի մատակարարման, պրոպան և բնական սեղմված գազի ձեռքբերման նպատակով սահմանել.

1)պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ համայնքի ղեկավարի տեղակալ Գարեգին Բաղայանին,

2)գնումների համակարգող՝ ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Արմինե Պետրոսյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» դեկտեմբերի 2017 թվականի N 286-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) Երևան - Գառնի մայրուղու թիվ 1՝ 43,19694 հա մակերեսով գույքից բաժանված 42,96596 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 1 և 0,230984 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 1/1,

2) Երևան - Գառնի մայրուղու թիվ 16/3՝ 3,23964 հա մակերեսով գույքից բաժանված 3,10377 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 16/3 և 0,13587 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 16/7,

3) Երևան - Գառնի մայրուղու թիվ 8՝ 3,77367 հա մակերեսով գույքից բաժանված 0,93769 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 8, 0,014859 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 8/1, 1,541498 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 8/2 և 1,279623 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 8/3,

4) Երևան - Գառնի մայրուղու թիվ 10՝ 5,24446 հա մակերեսով գույքից բաժանված 4,59344 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 10 և 0,65102 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 10/1,

5) Երևան - Գառնի մայրուղու թիվ 6՝ 257,89484 հա մակերեսով գույքից բաժանված 251,89484 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 6 և 6,0 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 6/9,

6) Երևան - Գառնի մայրուղու վրա գտնվող 07-057-0404-0001 կադաստրային համարի 30,28 հա մակերեսով գույքից բաժանված 30,047444 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 6/10 և 0,232556 հա մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ գյուղ Ջրվեժ, Երևան - Գառնի մայրուղի, թիվ 16/11:

2. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արտակ Վարդանյանի վրա:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ.դեկտեմբերի 25
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2017 թվականի N 287-Ա

ՇՈՂԻԿ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունըՋրվեժի 2-րդ փողոցի թիվ 63 տան բնակիչ Շողիկ Պատվականի Գալստյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ նրա ընտանիքը բազմանդամ է, ամուսինը՝ Արամայիս Ալեքսանյանը, հանդիսանում է 2-րդ խմբի հաշմանդամ, անընդհատ գտնվում է բժիշկների հսկողության տակ, աղջիկը և փեսան չեն աշխատում, նրանց խնամքի տակ են երեք մանկահասակ երեխաները, ծնված 2011, 2013, 2016 թվականներին և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Շողիկ Պատվականի Գալստյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Շողիկ Պատվականի Գալստյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» դեկտեմբերի 2017 թվականի N 288-Ա

ՍԱԹԵՆԻԿ ՆՈԴԱՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժի 6-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 9 տան բնակիչ Սաթենիկ Նոդարի Մինասյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ նրա ընտանիքը բազմանդամ է, ինքը, տղան և հարսը չեն աշխատում, նրանց խնամքի տակ են երկու մանկահասակ երեխաները՝ ծնված 2012, 2016 թվականներին, իր հետ են բնակվում թոշակառու ծնողները և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Սաթենիկ Նոդարի Մինասյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Սաթենիկ Նոդարի Մինասյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» դեկտեմբերի 2017 թվականի N 289-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Ռուդիկ Վաղարշակի Սևումյանի (ծնված՝ 1980 թվականի հունվարի 16-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 3-րդ փողոցի թիվ 16 հասցեի տնամերձ հողամասում (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22072013-07-0026 վկայական և անհատ ձեռնարկատեր Արմեն Բեկնազարյանի կողմից 2017 թվականի նոյեմբերի 30-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված երկու դուռը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և անհատ ձեռնարկատեր Արմեն Բեկնազարյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Ռուդիկ Վաղարշակի Սևումյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 3-րդ փողոցի թիվ 16 հասցեի տնամերձ հողամասում 2016 թվականին իրականացրել է շինարարական աշխատանքներ և ինքնակամ կառուցել բնակելի տուն, ծածկ, հարթակ-ծածկ՝ 90,15 քառ.մետր, օժանդակ շինություն՝ 0,7 քառ.մետր արտաքին մակերեսներով և ինքնակամ բացել է երկու դուռ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Ռուդիկ Վաղարշակի Սևումյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժի 3-րդ փողոցի թիվ 16 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների և ինքնակամ բացված դռների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները և բացված ինքնակամ դռները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Ռուդիկ Վաղարշակի Սևումյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժի 3-րդ փողոցի թիվ 16 հասցեի տնամերձ հողամասում հողամասում ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված երկու դուռը համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 240 682 (երկու հարյուր քառասուն հազար վեց հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 28
գ.Ջրվեժ